



Ազդարարության Trumpet's Sound փող

51-րդ ՏԱՐԻ, ԱԿՍՏՐԱԼԻԱ
ԱՆՊՏԵՄԲԵՐ - ԶՈՎՏԵՄԲԵՐ 2020



Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Սուրբգրային բառեր Հովիվ՝ Հրաչ Գույունյան
- Մեր արժեքը Ռեքս Տիրլավ
- Զորություն, սեր և խրատ. Վեր. Հովսեփ Հովսեփյան
- Կանոններ և հարաբերություններ Նելլ Բուքման
- Լսող Աստվածը Քաղված
- Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (4) ՉՄԵԸ պանորամա
- Սաղմոս 8. Դոն Սթորմըր
- Անհամբերության, անորոշության և
անկարելիության պայքարները Վահիկ Հադադյան
- Իմ անունը Հիսուս է Հովհաննես Ամմարանյան
- Տերը պահպանում է պանդոխտներին Քաղված
- Քալել, ինչպես վալելու է մեր կոչումին Վեր. Հասիպ Ալաճաճի
- Աղոթք Հովիվ՝ Գառնիկ Աբրեյան

Սուրբգրային բառեր

Աստվածաշնչում կան սուրբգրային նշանակալի բառեր, օրինակ՝ փրկություն, ապաշխարություն, մկրտություն, շնորհք... և այլն, բայց այն բառը, որի վրա ուզում եմ հրավիրել մեր ուշադրությունը, «ողորմություն» բառն է:

Ի՞նչ է ողորմությունը: Աստվածաշնչում Աստծո ողորմությունը նշանակում է մարդկանց հանդեպ Իր ցավակցությունը, կարեկցանքն ու բարությունը: Նրա ողորմությունը հավատացյալի կյանքում հայտնվեց վերջինիս փրկությամբ և այնուհետև Աստծո ցուցաբերած ամենօրյա ներմամբ: Ողորմությունը հաղթում է դատաստանին: Աստծո ողորմությունից հրաժարվելն ունի իր հետևանքները:

Սաղմոսների գրքում հաճախ տեսնում ենք, թե ինչպես է Դավիթը խոսում Աստծո ողորմության մասին.

«¹Դեպի Քեզ եմ բարձրացնում աչքերս, ո՛վ Երկնքում Բնակվող:

²Ահա, ինչպես ծառաների աչքերն են նայում իրենց տիրոջ ձեռքին, ու ինչպես աղախնու աչքերը՝ տիրուհու ձեռքին, այնպես էլ մեր աչքերը ՏԻՐՈՋԸ՝ մեր Աստծուն են նայելու՝ մինչև մեզ ողորմի:

³Ողորմի՛ր մեզ, ո՛վ ՏԵՐ, ողորմի՛ր մեզ, քանի որ չափազանց լի ենք անարգանքով:

⁴Չափազանց լի է մեր անձը հանգիստ ապրողների ծաղրուծանակով ու բարձրամիտների արհամարհանքով» (Սաղ. 123):

Եթե արդարություն ենք փնտրում, ապա հիշենք Հռոմ. 3:10-ը, որ ասում է. «Արդար չկա, ոչ իսկ մեկը»: Ո՛չ, Տե՛ր, մենք արդարություն չենք ուզում, քանի որ բոլորս մեղանչեցինք: Մեզ ողորմությունը ցո՛ւյց տուր:

Ուստի եկե՛ք մեր անձերը խոնարհեցնենք, ապաշխարությամբ գանք Նրա առջև, Նրա ոտքերի մոտ խոնարհվենք, քանի որ մեր Աստվածը ողորմած ու սիրող է:

Մարդիկ մեղավոր բնույթով են ծնվում, և Աստված մեզ արդարությամբ դատելու փոխարեն Իր մեծ ողորմությամբ, կարեկցությամբ ու գթասրտությամբ մեր արժանի պատիժը հեռացրեց մեզնից: Ողորմությունը մեր արդարացի դատապարտությունը մեզնից հեռացնելն է: Աստվածաշնչի էջերում հաճախ տեսնում ենք, թե ինչպես է Աստված ցույց տալիս Իր ողորմությունը:

Նա սիրեց մեզ: Երբ դեռ մեղավոր էինք, Իր Որդուն ուղարկեց մեր մեղքերի քավության համար:

Մեր ողորմած Հիսուսը, Իր ձեռքերը լայն բացած, սպասում է քեզ: Արդյոք կմոտենա՞ս Նրան և թույլ կտա՞ս, որ Իր ողորմությամբ ողորկի քեզ, որպեսզի խաղաղություն գտնես:

Հ. Գ.

Մեր արժեքը

Ինչպե՞ս շարունակել զրույցը մի անձի հետ, որին նախկինում չէք հանդիպել: Կար ժամանակ, երբ ընդունված էր հարցնել. «Ի՞նչ եք աշխատում»: Վերջին տարիների գործազրկության բարձր ցուցանիշը շատերին ստիպեց այս ռիսկային ու անխոհեմ հարցից զերծ մնալ, որին հաճախ հաջորդում էր ամոթխած լռությունը և աշխատանք փնտրելու ու աշխատանքային հեռանկարի վերաբերյալ կեղծ բացատրությունները:

Որպես մարդ արարած՝ մենք թյուրիմացաբար կարծում ենք, թե մարդկանց զբաղմունքը իմանալը ինչ-որ կերպով օգնում է մեզ՝ նրանց ինքնության մասին պատկերացում կազմելու: Մենք մեր ինքնության մասին գաղափար ենք կազմում մեր կատարած գործերից: Մարդկային էության այս փաստն է, որ սաստկացնում է գործազրկության ցավը: Գործազրկությունը մեր մեջ առաջացնում է կորած ինքնության զգացողություն, քանի որ այլևս ոչինչ չենք «անում»: Աշխատանքի և մարդկային ինքնագնահատականի փոխկապակցությունը խորը ու հաճախ վնասակար ազդեցություն ունի Աստծո հետ մեր հարաբե-

րությունների և ինքնագնահատականի վրա: Եթե մեր կատարած աշխատանքը մեզ ինքնություն է հաղորդում և ինչ-որ արժեք ներկայացնողի զգացում է պարզևում, ապա մենք սկսում ենք մտածել, թե Աստծո համար մեր կատարածների շնորհիվ է, որ արժեք ունենք Իր առջև: Արժեքավոր լինելու զգացումը կախում ունի որպես քրիստոնյա արդյունավետ լինելու չափից: Երբ բավարարվածության զգացումը պայմանավորված է լինում արդյունավետ քրիստոնեական ծառայությանը, ապա մենք մեր անձերը վտանգված ու խոցելի ենք դարձնում:

Տերը շատ հստակ մատնանշեց այս խնդիրը, երբ աշակերտները վերադարձան իրենց միսիոներական ճանապարհորդությունից: Նրանք ուրախ էին իրենց քրիստոնեական գերազանց ծառայությանը: Քրիստոսը միացավ նրանց ուրախությանը, սակայն շատ հստակ նախագուշացրեց: Մի՛ ուրախացե՛ք ձեր կատարածով, փոխարենը՝ ուրախացե՛ք, ձեր ով լինելով, որ խորապես սիրված եք Աստծո կողմից: «Ուրախացե՛ք, որ ձեր անունները գրված են երկնքում» (Դուկ. 10:20):

Եթե ձեր ուրախությունը, ինքնության զգացումն ու արժեքը պայմանավորված են ձեր կատարած գործերով, ապա կանգնած եք լուրջ վտանգի առջև: Արդյունավետ լինելու ճնշում կա ձեզ վրա: Դուք Աստծուն եք մոտենում ոչ թե Իր հետ մտերիմ հարաբերություն ունենալու, այլ քրիստոնեական արդյունավետ կյանքի, խնդիրների լուծման կամ գործության համար: Դուկ. Լարի Քրապը իր «Աստծուն գտնել» գրքում հետևյալն է գրել. «Մենք Աստծուն ենք մոտենում լուծումներ ստանալու համար, բայց Նա մեզ մոտենում է հաղորդակցվելու համար»: Աստված այլևս մտերիմ բարեկամ չէ, այլ օգտակար միջոց մեր ինքնությունը, արժեքն ու ուրախությունը գտնելու համար: Ծառայելու միջոցով մեզ լավ զգալը դառնում է մեր նպատակը, իսկ Աստված՝ այդ նպատակին հասնելու միջոցը:

Որոշ ժամանակ անց դուք կհասկանաք, որ ապարդյուն եք վազել, և որ Աստված հեռու է ձեզնից: Դուք ինքներդ ձեզ կհարցնեք, թե ինչն էր սխալ: Շատ պարզ է. Աստծուն ծառայելը փոխարինեցիք Աստծուն ճանաչելու հետ: Ուրախությունն ու արժեքավոր լինելու զգացումը գալիս են ոչ թե մեր կատարածներից, այլ մեր ով լինելուց. մարդիկ, որոնց

Աստված սիրում է: Հիշե՛ք Հովհաննես առաքյալին. նա այն անձն էր, որին Տեր Հիսուսը սիրում էր: Մենք պետք է վերադառնանք Աստծո հետ մտերմության հիանալի հրավերին:

«Ահա ես կանգնել եմ դռան մոտ ու թակում եմ, եթե մեկն իմ ձայնը լսի և բացի դուռը, կմտնեմ նրա մոտ և կրնժթեմ նրա հետ, և նա էլ՝ Ինձ հետ» (Հայտն. 3:20): Աստծո հետ այդ ներքին սեղանի շուրջը նստելը օգնում է մեզ՝ գտնելու մեր ճշմարիտ ինքնությունը և խորապես սիրված լինելու ուրախության զգացումը: Մեր խնդիրն այն է, որ մենք ուզում ենք ոտքի կանգնել ու գործել: Մենք կարծում ենք, թե մեր ինքնագնահատականը դրանով է պայմանավորված: Բայց Աստված պարզապես ուզում է նստել և մեզ հետ ուտել: Որտե՞ղ է Նրա առաջնահերթության զգացումը: Մենք պետք է սովորենք, որ քրիստոնեական որևէ արդյունավետ ծառայություն պարզապես արտացոլում է այն, ինչ կատարվում է Աստծո հետ մտերիմ հաղորդակցության վայրում: Նրանք, ովքեր իրենց ուրախությունն ու ինքնագնահատականը փնտրում են Աստծուն ծառայելու և ոչ թե Նրա հետ սերտ հարաբերություն ունենալու մեջ, վտանգում են իրենց անձերը, քանի որ այդպես կատարում են իրենց հոգևոր անկման առաջին քայլերը:

Չեր արժեքը ով լինելու մեջ է. դուք սիրված, ներված ու Աստծո հետ մտերիմ հարաբերություն ունենալու կանչված անձ եք:

Ռեքս Տիրլավ

Ջորություն, սեր և խրատ

Բ Տիմոթեոս 1

Աշխարհում թյուրընկալում կա այն մասին, որ Աստծուն, Հիսուսին, երկնքին, դժոխքին և հետմահու կյանքին հավատալն ու Քրիստոսի ուսմունքին հավատարմորեն հետևելը թուլության նշան է և ամաչկոտության, վախի, անապահովության, դժբախտության արդյունք: Սա խելամիտ տեսակետ չէ. աշխարհը չգիտի, որ հենց ճիշտ

հակառակն է: Վերստին ծնված հավատացյալն այլևս չի ապավինում իր սեփական ուժին և կարողությանը, այլ միանում է Աստծո գործության, իմաստության և սիրո աղբյուրին ու վայելում է Սուրբ Հոգու միջոցով Աստծուց տրված գերբնական հաճույքներն ու պարգևները:

«Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ գործության, սիրո և զգաստության: Ուրեմն՝ ամոթ մի՛ համարիր մեր Տիրոջ վկայությունը» (Բ Տիմ. 1:7-8):

Այստեղ Պողոս առաքյալը խոսում է Սուրբ Հոգու մասին, որը բնակվում է ճշմարիտ հավատացյալի մեջ: Սուրբ Հոգին մեր մեջ ոչ թե վախ է առաջացնում, այլ գործություն, սեր ու կարգուկանոն: Յուրաքանչյուր հավատացյալ ունի այդ երեքի կարիքը:

Աստված Սուրբ Հոգու միջոցով մեզ տալիս է գործության հոգի: Մեր տրամադրության տակ անսահմանափակ ուժ կա: Պողոս առաքյալը նախքան բանտում նահատակվելը վերոնշյալ նամակն է գրում Տիմոթեոսին: Մի՞թե Պողոսն ամաչկոտ և վախեցած մարդ էր, ամենևին էլ՝ ոչ:

Երբ կրոնական առաջնորդն ապահով նստած է իր փողոսյրե ապարանքում և նամակ կամ գիրք է գրում՝ ժողովրդին հորդորելով չմտահոգվել կամ չվախենալ, քանզի Հոգին կպաշտպանի նրանց. դա տեսություն է:

Բայց երբ գրում է այն մարդը, որը բանտում է և անարդարացիորեն շուտով պիտի մահանա, դա ուժ է, գործության իսկական դրսևորում, Սուրբ Հոգու կենդանի գործության փորձառում, որի միջոցով հավատացյալը կարող է ծառայել ու ապրել առանց վախի, հարատևել ու տոկալ, հաղթականորեն տառապել և նույնիսկ արժանապատվությամբ մահանալ: Աստված մեզ տվել է նաև սիրո հոգի: Աստծո հանդեպ ունեցած մեր սերն է, որ վանում է բոլոր վախերն ու Քրիստոսին ամեն գնով նվիրվելու ցանկություն է առաջացնում:

«Հոգու պտուղը սերն է» (Գաղ. 5:22):

Քրիստոսի, Աստծո Խոսքի, հավատացյալների և անհավատների հանդեպ ունեցած մեր սերը Սուրբ Հոգուց է բխում:

«Աստծո սերը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռքով, որ տրվեց մեզ» (Հռոմ. 5:5):

Ըստ էության, մարդու հանդեպ ունեցած մեր սերն է, որ ամեն տեսակի հալածանք ու չարչարանք կրելու և քաղցրությամբ պատասխանելու պատրաստակամություն է տալիս, եթե դու լցված ես Աստծո Հոգով, ապա գիտես, թե ինչի մասին եմ խոսում: Սուրբ Հոգին մեզ նաև ինքնատիրապետում է տալիս: Մենք պետք է ոչ թե անմտորեն վարվենք և հապճեպ քայլեր ձեռնարկենք, այլ խոհեմ և շրջահայաց լինենք: Անկախ հանգամանքներից՝ մենք պետք է զգույշ լինենք և պահենք մեր հավասարակշռությունը, դա հեշտությամբ կամ ինքնընդհատման չի տրվում: Մեր բնությունն ասում է. «Արա՛գ գործիր», և մեր արձագանքները սովորաբար հիմնված են մեր հույզերի, ոչ թե տրամաբանության կամ սիրո վրա:

Այդ բոլոր երեք առանձնահատկությունները՝ զորությունը, սերն ու կարգուկանոնը, լավագույնս դրսևորեց Հիսուս Քրիստոսը: Շատերն էլ հետևեցին Նրա քայլերին: Որպես եկեղեցի և անհատներ՝ արդյոք մենք քայլո՞ւմ ենք Նրա հետքերով:

Արդյոք դու փորձառո՞ւմ ես Սուրբ Հոգու զորությունը, սերը, և քո մեջ կա՞ կարգուկանոն: Եթե փորձառում ես, ուրեմն փա՛ռք Աստծո: Եթե վստահ չես կամ չգիտես ինչպես ընդունել այս զորությունը, հիշիր Հիսուսի խոսքերը.

«Դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեր վրա կգա» (Գործք 1:8):

Մենք Սուրբ Հոգին ստանում ենք միայն վերստին ծնունդ ստանալու միջոցով:

Վեր. Հովսեփ Հովսեփյան



Կանոններ և հարաբերություններ

Որոշ քրիստոնյաներ իրենց կյանքը համարում են ոչ ավելին, քան կանոնների պահելը: Նրանք կարծում են, թե բարոյական կյանքով ապրելը բավարար է, հետևաբար մշակում են որոշ կանոններ, որոնք առանց ավելորդ դժվարության կպահեն: Ոգելից խմիչք չեն օգտագործում, չեն ծխում, չեն երդվում և զգույշ են դրամի նկատմամբ: Չգույշ են դրամ վաստակելու և այն ծախսելու առումով: Բայց այսպիսի կյանքը երկու թերություն ունի. առաջին՝ զուտ բարոյական կյանքով ապրել չի նշանակում, որ անձը հոգևոր կյանքով է ապրում, և երկրորդ՝ այդպիսի կյանքով ապրել նշանակում է Տիրոջ հետ փոխհարաբերության պակաս: Յուրաքանչյուր անձ պետք է հասկանա, որ այդպիսի կյանքը ոչ այլ ինչ է, քան մեր բարձր կոչմանը համապատասխան կյանք ապրելու մեր աղքատ ու խեղճ փորձը: Կանոնները երբեք չեն փոխարինում հարաբերություններին:

Այնուամենայնիվ, մենք գիտենք, որ անձնական կարգապահությունը շատ օգտակար է քրիստոնյայի համար, և այն անպայմանորեն պահանջում է որոշ կանոններ, որոնք անձամբ ենք սահմանում մեզ համար: Նրանք կարող են և՛ դրական լինել, և՛ բացասական. «Ես սա պետք է անեմ» կամ «Ես սա պետք է չանեմ»: Երկու մոտեցումներն էլ կանոններ են, և երկու ձևերն էլ վտանգավոր են:

Վտանգավոր են այն առումով, որ Տեր Հիսուսի միջոցով Աստծո հետ մեր ունեցած խաղաղությունը խափանվում է, և մեր կենսակերպը կամ գործունեությունը դառնում է մեր խաղաղության հիմքը: Մենք սկսում ենք խորհել, որ եթե ճիշտ կյանքով ապրենք, ապա Աստծո հետ ուղիղ և օրհնված կլինենք, բայց եթե մի քիչ սայթաքենք կամ թուլանանք, ապա մեր խաղաղությունը կվերանա: Եթե այդպես մտածեք, ապա Աստծո կողմից որևէ կարգապահական հանդիմանություն ձեզ համար ծանր կլինի, և Աստծուն կտեսնեք որպես ավելի շատ անողորմ Տիրոջ, քան ձեր Երկնավոր Հոր:

Ուստի այս սխալից զերծ մնալու համար մենք պետք է գրեթե ֆանատիկորեն կառչենք Քրիստոսի փառավոր Ավետարանից, որտեղ

մեր արժանիքները բուրբովին շնորհքով են տրված մեզ, և որտեղ Նրա կատարած զոհաբերությամբ ենք դարձել Աստծո սիրելիները: Միայն այդ զոհաբերության շնորհիվ հաշտվեցինք Աստծո հետ. մեր գործերով կամ առաքինությամբ երբեք չէինք կարողանա Աստծո հետ հաշտվել: Ամբողջական, կատարյալ և հավիտենական հաշտությունը Քրիստոսի՝ խաչի վրա թափած արյան միջոցով եղավ, Նրա հրաշալի հարության գործությամբ: Նրա հետ մեր փոխհարաբերության ու հավատքի շնորհիվ է ապահովված մեր լիարժեք փրկությունը:

Ուրեմն ինչո՞ւ է ընդհանրապես հարկավոր անձնական կարգապահությունը: Քանի որ մեր փրկությունը դեռևս ավարտված չէ: Մենք անհամբերությամբ ենք սպասում մարմնի խոստացված հարությանը, երբ մեր Տերը վերադառնա: Միևնույն ժամանակ մենք երեք թշնամի ունենք, որոնց հետ պետք է պայքարենք. աշխարհային համակարգը, որը շարունակում է մերժել Քրիստոսին, սատանան, որը փորձում է ոչնչացնել Նրա աշխատանքը, և մեր սեփական մեղավոր բնույթը, որը գերադասում է Աստված լինել, քան երկրպագել Աստծուն: Անհատական կարգապահությունը պարզապես գետի հոսանքին հակառակ լողալ սովորելն է: Ոչ ոք չի կարող հոգևոր կյանքով ապրել՝ առանց այսպիսի կարգապահության: Պողոսը Տիմոթեոսին ուղղած իր նամակում խոսում է մարզիկների և զինվորների մասին: Պողոսի ժամանակակից հավատացյալները անկասկած ըմբռնեցին կարգապահ հոգևոր կյանք ապրելու անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, մնում է մեկ կարևոր հարց. ինչպիսի՞ն է հոգևոր կյանքը:

Տեր Հիսուսն անձամբ հոգևոր կյանքի կատարյալ օրինակն է: Եթե ձեզ ասեն, թե վարքի որոշակի տեսակը հոգևոր սկզբունք է, ապա ինքներդ ձեզ պարզապես հարցրեք, թե արդյոք Տեր Հիսուսը այդպե՞ս էր անում, թե՞ ոչ: Սուրբ Գիրքը հստակ է. «Նա, ով ասում է, թե Նրա մեջ է բնակվում, ինքն էլ պետք է քայլի այնպես, ինչպես Նա էր քայլում» (Ա Հովհ. 2:6):

Արդյո՞ք հոգևոր մարդը իրեն շատ սուրբ ու մաքուր է զգում: Ո՛չ: Ի տարբերություն Տիրոջը՝ մենք ապականված ու մեղավոր բնույթ ունենք, որի հետ ամեն օր պետք է գործ ունենանք, որպեսզի մեղքը

«չթագավորի ձեր մահկանացու մարմնի վրա» (Հռոմ. 6:12): Մինչ շարունակում եք Հոգով քայլել, դուք ավելի ու ավելի եք սկսում հասկանալ ձեր ապականված լինելը: Սակայն միևնույն ժամանակ դուք սովորում եք նրա նվաստացուցիչ ազդեցությունից ազատ կյանք ապրել, այնպես որ սկսում եք սիրել անձնուրաց կերպով: Մարդիկ ձեր կյանքում սկսում են տեսնել Քրիստոսին, բայց դուք ձեզ ընդհանրապես քրիստոսանման չեք տեսնում: Այնուամենայնիվ, ունենում եք Նրա խաղաղությունը և ավելի ու ավելի եք ուրախանում Նրանով: Ձեր բաժակը խիստ լցվում է, բարությունն ու ողորմությունը հետևում են ձեզ կյանքի բոլոր օրերում, և դուք հավիտյան Տիրոջ տան մեջ եք բնակվում:

Նիլ Բուրման

Լսող Աստվածը

«Կատուն ձագեր ունեցավ մեր ներքևի հարկի հյուրասենյակի մահճակալի վրա», - պատմում է Հռոմ Գրահանը: Այս տեղը անհարմար համարելով՝ նորածին փիսիկներին դրեցինք տուփի մեջ, տուփն էլ՝ խոհանոցի վառարանի առջև, մինչև որ ավելի լավ տեղ գտնեինք:

Սակայն մայր կատուն յուրահատուկ խորհուրդ ուներ: Չվարճությամբ դիտեցինք, մինչ նա լռությամբ խոհանոց մտավ, հետևի թաթերի վրա կանգնեց, առջևի թաթերը տուփի վրա դրեց ու հոտոտեց իր ձագերին: Ապա ճկունությամբ ցատկեց տուփի մեջ և փիսիկների ծոծրակից բռնելով՝ նրանց մեկ առ մեկ տարավ ներքևի հյուրասենյակի մահճակալի վրա: Միայն մեկ ձագ մնաց տուփի մեջ, բայց մայրը չվերադարձավ: Միգուցե շատ հոգնեց, կամ զբաղված էր ձագերին կերակրելով:

Սպասեցինք: Վերջապես տուփի մեջ մնացած փոքրիկ փիսիկը շշուկ հանեց, գրեթե անձայն մլավոց: Անմիջապես մայր կատուն եկավ, մտավ տուփի մեջ և ամենափոքր ձագին բերանով բռնեց ու տարավ հյուրասենյակ: Երեք դրնից, երկու սենյակից և երկու անցքից այն կողմ նա լսել էր իր տկար ձագուկի ճիչը, որը նույնիսկ կանչի նման չէր:

Մեր աղոթքները հաճախ կատարյալ չեն, ոչ էլ հատուկ օգնության աղերսանքներ: Աստվածաշնչի համաձայն, Աստված մեր հառաչանքների, արցունքների և մրմունջների պատասխանում է: Նույնիսկ մեր բաղձանքները կարող են որպես աղոթք մեկնաբանվել:

17-րդ դարի սուրբգրային աստվածաբան Ջան Թրեբը, Սաղմոս 145-ը մեկնաբանելով, ասում է. «Տերը մոտ է բոլոր Իրեն կանչողներին: Նա զգում է նրանց շունչը, երբ տկարացած չեն կարողանում ձայն տալ» (Սաղմոս 145:18):

Ուստի աղոթե՛նք, աղաղակե՛նք կամ տկար ձայնով կանչե՛նք, Աստված կլսի մեզ և կշտապի օգնության հասնել:

«Օրհնյա՛լ լինի Տերը, որ լսեց իմ աղերսանքների ձայնը: Տերը իմ գործությունն ու վահանն է. իմ սիրտը Նրան հուսաց, ու ես օգնություն գտա: Ուստի սիրտս մեծապես հրճվում է. և իմ երգով ես Նրան եմ փառաբանելու» (Սաղ. 28:6-7):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենի» գրքից

Խոնարհություն է, երբ մարդիկ քեզ փառաբանում են և պարզևներ տալիս, սակայն դու քո անձի արժանիքներին չես վերագրում, այլ Աստծուն ես փառաբանում, Աստծուց գոհանում և ասում, թե՛ այն Քո ողորմությունից է և ոչ ըստ իմ արժանիքների, ինչպես ասում է Սողոմոնը. «Որչափ մեծության էլ հասնես, քեզ խոնարհ պահիր և շնորհ և ողորմություն կգտնես Աստծո առջև»:

Խոնարհություն է, երբ վշտի ես հանդիպում, և նեղություն է քեզ վրա հասնում, դու չես տրտմում, այլ գոհանում Աստծուց. «Ըստ իմ մեղքերի ես ոչ միայն այսչափ, այլև բազում պատիժների եմ արժանի, և օրհնյալ է Աստված, որ այս անցավոր կյանքում և մահկանացու մարմնի մեջ ինձ վշտի արժանացրեց», ինչպես ասում է առաքյալը. «Հոժար եմ նեղությունների, վշտերի, չարչարանքների, որովհետև երբ տկարանում եմ, այդժամ զորանում եմ»:

Անանիա Նարեկացի

Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (4)

4.3 Պերգամոնի եկեղեցին (2:12-17)

Ներածություն. Տեր Հիսուսը ներկայացվում է որպես Մեկը, ով սրբաժնի տրված երկասյրի սուր ունի:

Գովասանքի խոսք. չնայած նրանց աշխարհիկ իրավիճակին («որտեղ սատանայի աթոռն է») և այն փաստին, որ եկեղեցում կային չար վարդապետություն պահողներ՝ կային նաև նրանք, ովքեր հավատարիմ մնացին Տիրոջը ու չուրացան իրենց հավատքը, նույնիսկ հավատարիմ Անթիպասի սպանվելու օրոք:

Դժգոհություն. այնտեղ կային մարդիկ, ովքեր հետևում էին Բաղասամի վարդապետությանը, նաև ոմանք, ովքեր հավատարիմ էին Նիկողայոսյան վարդապետությանը:

Բաղասամը իսրայելացի տղամարդկանց դրդեց սեռական հարաբերություն ունենալ մովսրացի կանանց հետ, որոնք նրանց հրավիրում էին իրենց աստվածներին զոհեր մատուցելու արարողություններին: Սա պատկերում է եկեղեցու և աշխարհի միության պատկերը: Տե՛ս Թվոց 25:1-9-ը:

Հորդոր. նրանք պետք է ապաշխարեն: Եթե դա չանեն, ապա Տերը կգա և Իր բերանի սրով կպատերազմի նրանց դեմ: Նրանք պետք է լսեն, թե ինչ է ասում Հոգին եկեղեցիներին:

Խոստում հաղթողին. յուրաքանչյուր ճշմարիտ ու հավատարիմ քրիստոնյա կստանա պահված մանանայից ու ճերմակ մի քար, որի վրա գրված է մի նոր անուն, որը ոչ ոք չգիտի, բացի նրանից, ով ընդունում է այն:

4.4 Թիվատիրի եկեղեցին (2:18-29)

Ներածություն. Տեր Հիսուսը ներկայանում է որպես «Աստծո Որդին, որ կրակի բոցի պես աչքեր ունի, և Նրա ոտքերը ազնիվ պղնձի մման են» (Հայտն. 2:18):

Գովասանքի խոսք. Նա գիտեր նրանց գործերը, սերը, հավատքը, ծառայությունն ու համբերությունը, և որ նրանք այժմ ավելին են անում, քան սկզբում էին արել:

Գժգոհություն. կային ոմանք, ովքեր հանդուրժում էին մի մարգարետուհու (Հեզաբելի նման մեկին), որը հրապուրում էր Տիրոջ ծառաներին անբարոյականություն գործելու և կուռքերին զոհաբերված սնունդ ուտելու:

Հորդոր. մարգարետուհու ասածներին չանսացողներին Տերը պատվիրում է. «Պահեցե՛ք այն, որ արդեն ունեք, մինչև Ես գամ» (Հայտն. 2:25):

Խոստում հաղթողին. յուրաքանչյուր ճշմարիտ ու հավատարիմ քրիստոնյային կտրվի բոլոր ազգերի վրա իշխանություն, նաև առավոտյան աստղը:

Նրանք պետք է լսեն, թե ինչ է ասում Հոգին եկեղեցիներին:

Պողոսը գրել է. «Եթե տառապենք, Նրա հետ էլ պիտի թագավորենք» (Բ Տիմ. 2:12): Առավոտյան աստղը Տիրոջ վերադարձի հույսն է առ այն, որ Նա գալու է՝ նրանց Իր մոտ տանելու համար:

4.5 Սարդիկեի եկեղեցին (3:1-6)

Ներածություն. Տեր Հիսուսը ներկայանում է որպես Մեկը, ով ունի Աստծո յոթ հոգիները ու յոթ աստղերը:

Գովասանքի խոսք. Սարդիկեում կային ոմանք, ովքեր չկեղտոտեցին իրենց հագուստները: Տերն ասում է նրանց. «Ճերմակ հագուստներով շրջելու են Ինձ հետ, քանի որ արժանի են» (Հայտն. 3:4):

Գժգոհություն. Նա գիտեր նրանց գործերը. նրանք անունով կենդանի եղողի համբավն ունեն, բայց մեռած են:

Հորդոր. նրանք պետք է արթնանան ու հաստատեն այն մնացած բաները, որ մեռնելու վրա են: Նրանք պետք է հիշեն իրենց ստացածն ու լսածը, հնազանդվեն դրան ու ապաշխարեն: Եթե այդպես չանեն, ապա Տերը անսպասելիորեն, գողի պես կգա նրանց վրա:

Խոստում հաղթողին. յուրաքանչյուր ճշմարիտ ու հավատարիմ

քրիստոնյային, ինչպես և վերևում նշված է, ճերմակ հագուստներ կտրվեն: Նրանց անունը երբեք չի ջնջվի Կենաց գրքից, և Տերը կդավանի նրանց անունը Իր Հոր ու հրեշտակների առաջ (Հայտն. 3:5): Նրանք պետք է լսեն, թե ինչ է ասում Հոգին եկեղեցիներին:

4.6 Ֆիլադելֆիայի եկեղեցին (3:7-13)

Ներածություն. Տեր Հիսուսը ներկայանում է որպես Մեկը, ով սուրբ ու ճշմարիտ է, որն ունի Դավթի բանալին, որը բացում է, և չկա մեկը, որ կարող է փակել, և փակում է, ու չկա մեկը, որ կարող է բացել:

Սա վերցված է Եսայի 22:22-ից, որտեղ Եղիակիմը Տեր Հիսուսի պատկերն է՝ որպես լիակատար իշխանություն ունեցող իշխանի:

Գովասանքի խոսք. նրանք պահեցին Իր Խոսքը և չուրացան Նրա անունը: Նրանք պահեցին համբերատարությամբ դիմանալու Նրա պատվերը:

Դժգոհություն. դժգոհություն չկա:

Հորդոր. քանի որ Նա շուտով գալու է, նրանք պետք է պահեն իրենց ունեցածը, որպեսզի ոչ ոք չխլի նրանց պսակը:

Խոստում հաղթողին. յուրաքանչյուր ճշմարիտ ու հավատարիմ քրիստոնյայի համար խոստում կա, որ նա Աստծո տաճարում կդառնա սյուն, որտեղ հավիտյան կմնա: Նա նրա վրա կգրի Աստծո և Աստծո քաղաքի անունը՝ նոր Երուսաղեմը: Նա նաև նրա վրա կգրի Տիրոջ նոր անունը: Նրանք պետք է լսեն, թե ինչ է ասում Հոգին եկեղեցիներին:

4.7 Լավողիկեի եկեղեցին (3:14-22)

Ներածություն: Տեր Հիսուսը ներկայանում է որպես Ամենը, հավատարիմ ու ճշմարիտ վկա, Աստծո ստեղծագործության Սկիզբ:

Գովասանքի խոսք. գովասանքի խոսքեր չկան:

Դժգոհություն. Նա գիտեր նրանց գործերը, որ ո՛չ սառն էին, ո՛չ էլ տաք. նրանք գաղջ էին: Նա նրանց փախելու էր Իր բերանից: Չնայած նյութապես հարուստ էին, սակայն չէին գիտակցում, որ իրենք խեղճ, թշվառ, աղքատ, կույր ու մերկ են:

Հորդոր. նրանք պետք է կրակի մեջ գտված ոսկի գնեն Տիրոջից, որպեսզի հոգևոր բաներով հարստանան: Նրանք նաև պետք է ճերմակ հանդերձանք գնեն, որպեսզի հագնեն, ծածկեն իրենց ամոթալի մերկությունը և դեղ դնեն իրենց աչքերին, որպեսզի տեսնեն: Նրանք պետք է նախանձախնդիր լինեն ու ապաշխարեն: Նա նրանց ասաց. «Ահա Ես կանգնել եմ դռան մոտ ու թակում եմ. եթե մեկն Իմ ձայնը լսի և բացի դուռը, կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ, և նա էլ՝ Ինձ հետ» (Հայտն. 3:20):

Խոստում հաղթողին. յուրաքանչյուր ճշմարիտ ու հավատարիմ քրիստոնյա իրավունք կատանա մատել Տիրոջ հետ Նրա գահին, ինչպես որ Նա հաղթեց և մատեց Հոր հետ Իր գահին: Նրանք պետք է լսեն, թե ինչ է ասում Հոգին եկեղեցիներին:

5. Մեզ համար այսօր (2:1-3:22)

Քանի որ ամբողջ Գիրքը Աստծո շունչն է և օգտակար է վարդապետության, հանդիմանելու, ուղղելու և արդարության խրատելու համար (Բ Տիմ. 3:16), մենք պետք է թույլ տանք, որ Սուրբ Հոգին կիրառի այս նամակների բովանդակությունը մեր իսկ սրտերում և կյանքում: Անկասկած դրանք տարբեր կերպ կանդրադառնան մեզ վրա, այնպես որ մենք ձեր ուշադրությունը հրավիրում ենք պարզ տեսանելի մի քանի կետերի վրա:

Եփեսոսի եկեղեցին լքել էր իր առաջին սերը: Նրանք դեռ լավ գործեր անում էին, բայց շեղվել էին Տիրոջ վրա կենտրոնանալուց: Նրանք այլևս դրված չէին Տիրոջ հանդեպ սիրուց. նրանք այդ ամենն անում էին որպես պարտականություն: Պողոս առաքյալը Թեսաղոնիկեի եկեղեցուն գովեց հետևյալ խոսքերով. «Աստծո և մեր Հոր առջև անդադար հիշելով ձեր հավատի գործը, սիրո աշխատանքը և մեր Տեր Հիսուս Քրիստոսի հույսի համբերությունը» (Ա Թես. 1:3): Աստված Իր շնորհով Իր սերը սփռեց մեր սրտերում (Հռոմ. 5:5), և Նա ուզում է այդ սիրո ապացույցները տեսնել մեր կյանքում:

(Շարունակելի)



Սաղմոս 8

(Կարդացե՛ք 8-րդ սաղմոսը)

Ութերորդ սաղմոսը ևս մեկ մեսիական սաղմոս է, որը երկու անգամ մեջբերված է Նոր Կտակարանում: Այն սկսվում և ավարտվում է հետևյալ խոսքով. «Ո՛վ Տեր, մեր Տեր, ի՛նչ գերազանց է Քո անունը ամբողջ երկրի վրա»: Գովաբանության այս պոռթկումը ստիպում է մեզ հարցնել, թե ինչո՞ւ Դավիթը գրեց այս խոսքերը: Կարող ենք պատկերացնել նրան՝ գիշերային բաց երկնքի տակ նստած: Իր տեսածի մեծության մասին մտածելուց հետո նա հարցնում է, թե ինչո՞ւ Աստված մարդուն այդքան փառք ու պատիվ տվեց:

Դավիթը գիտակցեց Աստծո վեհությունը, երբ նայեց գիշերային երկրնքին ու դիտեց լուսինն ու աստղերը: Նրա ստեղծագործության մեծությունը ճանաչված է ամբողջ երկրի վրա, և սա նշանակում է, որ Իր անունը վեհ է, գերազանց է: Աստծո փառքը երկնքից վեր է: Որքան էլ Աստծո արարչագործությունը մեծ է, Նրա փառքը այդ ամենի սահմաններից վեր է:

Աստծո անունն այնքան մեծ է, որ նույնիսկ կաթնկեր մանուկները գովասանքի խոսքեր են ասում Նրան: Տեր Հիսուսը այս հատվածը մեջբերեց ավանակի վրա նստած՝ Երուսաղեմ մտնելուց հետո: Երբ տաճարի տարածքում գտնվող մանուկները «Ովսա՛ննա, Դավթի՛ Որդի» բացականչեցին, քահանայապետերն ու դպիրները առարկեցին, և ի պատասխան՝ Տերը հարցրեց նրանց, թե երբևէ չե՞ն կարդացել. «Մանուկների և ծծկերների բերանով օրհնություն կատարեցիր» խոսքը (Մատթ. 21:15-16):

Ինչո՞ւ Աստված մանկանց ու կաթնկեր տղաների բերանում փառաբանության խոսքեր դրեց Իր թշնամիների համար: Այս կերպ Աստված լռեցրեց թշնամու և վրեժխնդրի ձայնը: Մարդն իր հպարտությանը Աստծուն հարցեր է ուղղում: Աստծո իմաստությունը կասկածի տակ դնելու փոխարեն նա պետք է մանկան հավատքով Ամենակարողի առաջ խոնարհվի:

Հավանաբար Դավիթը գրեց այս սաղմոսը, երբ ոչխարներին էր արածեցնում աստղալից երկնքի տակ: Նա գիտեր, որ երկինքը Աստծո մատների գործն է. Աստված լուսինն ու աստղերը հաստատեց: Մրա մասին ավելին ենք սովորում Մուրբ Գրքի այլ հատվածներում: Եսայի 40-րդ գլուխը սովորեցնում է մեզ, որ Աստված ոչ միայն ստեղծեց աստղերը, այլև յուրաքանչյուրին անունով կոչեց: Նա պահում է նրանց, որպեսզի նրանցից ոչ մեկը չկորչի: Անթիվ-անհամար աստղեր՝ յուրաքանչյուրը անունով կոչված և իր տեղը հաստատված... Այս բոլորը վկայում են մեր Աստծո անսահման մեծության մասին:

Աստղերի բազմության մասին խորհելը Դավթին առաջնորդեց մեկ այլ հարցի: Նման հոյակապ տիեզերք ստեղծելով՝ ինչո՞ւ է Աստված հոգում մարդու մասին: Ի՞նչ է մարդը՝ հողի փոշուց արարված, որ Աստված նրա մասին մտածի: Ավելին՝ Աստված ոչ միայն մտածեց մեր մասին, այլև այցելեց մեզ: Ինչո՞ւ:

Լավ է այսպիսի հարց տալ ու հիշել, որ Աստծո օգնությունն ու մեր մասին հոգ տանելն է մեզ իրական արժեք պարգևում: Այն, ինչ Նա անում է, Իր փառքի համար է անում. մեզ այցելելով Նա օրհնում է մեզ ու ցույց է տալիս Իր մեծ փառքը:

Դավիթը մտածեց ստեղծագործական գործում առկա կարգուկանոնի մասին: Աստված մարդուն հրեշտակներից փոքր-ինչ ցած արեց: Մարդը չի կարող անել այն, ինչ հրեշտակներն են անում: Նա չի կարող թռչել ու Աստծո կամքը կատարել: Հրեշտակները ավելի մեծ են գործությամբ ու կարողությամբ (Բ Պետ. 2:11): Այնուամենայնիվ, Դավիթը ավելացնում է հիանալի միտք. Աստված փառքով ու պատվով պսակեց մարդուն:

Երբ Աստված արարեց մարդուն ու դրեց Եդեմի պարտեզում, նրան իշխանություն տվեց ողջ արարչագործության վրա. ընտանի կենդանիները, վայրի կենդանիները, թռչունները, ձկները և ծովերում եղած ամեն ինչ դրված էր մարդու իշխանության տակ:

Դավթի հարցը, թե մարդը ի՞նչ է, ցույց է տալիս իր հավատքի ու երկրպագության մարդ լինելու իրողությունը՝ ի տարբերություն ամբարիշտ մարդուն, ով ինքն իրեն համարում է տիեզերքի տիրակալ, ով ծրագրում է գաղութացնել տիեզերքը: Բայց կա ևս մեկ պատաս-

խան, որը պետք է հաշվի առնենք: Երբ նայում ենք աշխարհին, տեսնում ենք, որ մարդը չի վերահսկում այն: Նա բոլոր թռչունների և կենդանիների վրա իշխանություն չունի. նա նույնիսկ ինքը իրեն չի կարողանում վերահսկել: Ակնհայտ է, որ ամեն ինչ մարդու իշխանության տակ չէ: «Որովհետև այն գալիք աշխարհը, որի մասին խոսում ենք, Նա հրեշտակներին չենթարկեց: Սակայն մեկը վկայեց մի տեղ՝ ասելով. «Մարդն ի՞նչ է, որ նրան հիշում ես, կամ՝ մարդու որդին, որ այցելում ես նրան: Փոքր ինչ ցածր արարեցիր նրան, քան հրեշտակներին, փառքով և պատվով պսակեցիր նրան ու Քո ձեռքի գործերի վրա կարգեցիր նրան. դու ամեն ինչ հնազանդեցիր նրա ոտքերի տակ»: Ամեն ինչ նրան հնազանդեցնելով՝ ոչինչ չթողեց, որ նրան չհնազանդված լինի: Սակայն այժմ դեռ ամեն ինչ չէ, որ նրան հնազանդված ենք տեսնում: Բայց մենք տեսնում ենք Հիսուսին, որ հրեշտակներից մի քիչ ցածր դասվեց մահվան չարչարանքների պատճառով՝ փառքով և պատվով պսակված, որպեսզի Նա, Աստծո շնորհով, ամեն մարդու համար մահ ճաշակի» (Եբր. 2:5-9):

Երբայեցիներին ուղղված նամակի հեղինակը այս հատվածին է անդրադառնում, որպեսզի ցույց տա Տեր Հիսուսի գերազանցությունը հրեշտակների նկատմամբ: 4-6-րդ համարները մեջբերելով՝ նա ավելացնում է այն կարևոր միտքը, որ սա այն է, ինչ մենք չենք տեսնում. մարդը ստեղծագործության վրա իշխանություն չունի: Հեղինակն ասում է, թե Աստված մարդուն ստեղծեց իշխանություն ունենալու համար, բայց սա դեռ կատարված չէ:

Ի՞նչ ենք տեսնում: Մենք դեռ չենք տեսնում, որ մարդը իր շրջապատի բնության վրա իշխանություն ունի: Բայց մենք Հիսուսին ենք տեսնում: Տեսե՛ք, թե ինչ է ասված Նրա մասին. «Նրան փոքր-ինչ ցած արիք, քան հրեշտակներին...»: Նա կարճ ժամանակի համար հրեշտակներից մի քիչ ցածր դիրք զբաղեցրեց: Սա եղավ մահվան չարչարանքը կրելու համար: Հիսուսը Աստծո շնորհքով մահը ճաշակեց բոլորիս համար: Այժմ Նա պսակված է փառքով ու պատվով:

Երբայեցիներին ուղղված նամակի հեղինակն ուզում է, որ խորհենք սրա մասին: Մարդը իր աստվածատուր պարտականությունները աղավաղեց: Նա այլևս արարչագործության վրա իշխանություն չունի:

Տեր Հիսուսը հիմա կատարում է Աստծո նպատակները: Մի օր Նա վերադառնալու է աշխարհ ու հաստատելու է Իր իշխանությունը: Այդ ժամանակ ամեն ինչ հնազանդվելու է կատարյալ Մարդուն: Աստծո ընտրած Մարդը վերահսկելու է տիեզերքը, բոլորը Իրեն են ենթարկվելու:

Այս ամենի մասին մտածելով՝ մենք նույնպես լցվում ենք փառաբանության հոգով ու միասին ասում ենք. «Ո՛վ Տեր, մեր Տեր, ի՛նչ գերազանց է Քո անունը ամբողջ երկրի վրա»:

Դոն Սթորմըր

Անհամբերության, անորոշության և անկարելիության պայքարները

Բ Տիմոթեոս 4:5-8

Նոզևոր կյանքի ընթացքում բոլորս անխտիր հանդիպում ենք մի շարք պայքարների. դրանց տեսակները տարբեր են: Ուզում են շեշտել միայն հետևյալ երեք պայքարները: Դրանք պարզ կերպով ընտելանում են մեր առօրյային և ժամանակի ընթացքում նվազեցնում մեր թե՛ ֆիզիկական, թե՛ զգացական, թե՛ հոգեկան առողջությունը: Առաջինը **անհամբերության** դեմ պայքարն է: Ապրում ենք մի ժամանակամիջոցում, որտեղ նորանոր գյուտեր և հնարքներ են օգտագործվում կյանքը արագացնելու, ժամանակը խնայելու համար, որպեսզի ավելի լավ արդյունքների հասնենք: Այս մեքենայացումը ոչ միայն տեղ է գրավել աշխատավայրերում, դպրոցներում և գրասենյակներում, այլև մուտք է գործել տներ և նույնիսկ անձնական կյանքեր:

Աշխարհը արագ է սահում, գիտությունը արագ է առաջանում, ու ժամանակի խնայողությունը և ավելի լավ արդյունքի հասնելու միտումը դառնում են մարդկության նպատակը: Լավ է այսպիսի նորա-

նոր գիտություններ օգտագործել, բայց միևնույն ժամանակ վտանգավոր ու վնասակար կարող է լինել ապրել մշտատև շտապողականության մեջ: Դժբախտաբար, շատերն այս արագ և շտապ կենցաղավարությունը, արագ մտածելակերպը որդեգրում են իրենց հոգևոր կյանքում՝ հաճախ կրելով դրա վնասները, քան թե բարիքները: Որքան թույլ տանք, որ շտապողականությունը և անհամբերությունը իրենց ազդեցությունը թողնեն մեր աստվածապաշտության մեջ, այնքան մեր հոգևոր կյանքի ընթացքը կդանդաղի ու կնոսրանա: Հաճախ արագ կատարած գործը, կորցնելով իր բնական ընթացքը, կորցնում է իր համը, բույրը, ճառագող գոհացման զգացումը: Այն վերածվում է չոր, միօրինակ պարտականության: Հոգևոր կյանքը անմասն ընթացք է:

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ հոգևորը նման է ծառի, որ իր ժամանակին տալիս է իր պտուղը: Ծառը չի աճում մեկ գիշերվա մեջ, մի քանի ժամվա մեջ պտուղ չի տալիս: Պարարտ ծառ ունենալու համար հարկավոր է աշխատել համբերությամբ, նրա մասին հոգ տանելով, խնամելով և սպասելով, որ ծառը իր ժամանակին իր ընթացքը կատարի: Շտապողականության և անհամբերությամբ դեմ հաղթական կարող ենք լինել միայն սպասելով Աստծուն: Մեզ համար օրինակելի են Հին Կտակարանի հերոսներից Նոյը, Հոբբը: Տեր Հիսուսը համբերության և սպասելու ամենամեծ օրինակն էր, երբ հոժարեց խմել այն դառն բաժակը, որ Հայր Աստված պատրաստել էր Իր համար աշխարհի վրա:

Սաղմոս 59 և 62-ում Դավիթն ասում է, որ իր անձը լուռ սպասում է Աստծուն, ումից գալու է իր փրկությունը: Տերը նրա գործության վեճն էր ու ապավենը: Այս խոսքերից սովորում ենք, որ մենք նախ պետք է սպասենք Աստծուն, որ ուղղի մեր որոշումները: Մենք պետք է ապավինենք և վստահենք Աստծուն մեր կարիքների համար: Սաղմոս 46:10-ում Աստված պատվիրում է. «Հանդարտ մնա, և իմացի՛ր, որ Ես Աստված եմ»: Եսայի 40:31-րդ համարն ասում է. «Սակայն նրանք, ովքեր ՏԻՐՈՋՆ են ապավինում, պիտի նորոգեն իրենց ուժը, արծիվների պես թևերով վեր պիտի սլանան, պիտի վազեն ու չպիտի հոգնեն, պիտի քայլեն ու չպիտի նվաղեն»: Ի՞նչ կա կյանքիդ մեջ, որ

անհամբեր է դարձնում քեզ: Արդյոք ապավինո՞ւմ ես Տիրոջդ, սպասումով դիմո՞ւմ ես Աստծուն:

Երկրորդը **անորոշության** դեմ պայքարն է: Հին Կտակարանում կարդում ենք Աբրահամի կյանքի մասին և թե ինչպես Աստված ասաց նրան, որ հավաքի իր ունեցվածքը ու գնա այն երկիրը, որն Ինքը նրան ցույց կտա, ու խոստացավ մեծ ազգ անել ու օրհնել նրան: Աբրահամը կատարեց Աստծո ասածը: Թերևս եթե մենք լինեինք Աբրահամի փոխարեն, հավանաբար առաջարկեինք Աստծուն ներկայացնել մեզ այս ծրագրի մանրամասնությունները, որպեսզի կարողանայինք դրա համաձայն պատրաստվել և կարգադրություններ անել: Բայց տեսնում ենք, որ Աբրահամը հնազանդվեց, իր կոչումը ստանալով՝ գնաց, ու չգիտեր, թե ուր է գնում: Աբրահամը վստահեց Աստծո խոստմանը: Միգուցե մենք էլ այսօր անցնում ենք անորոշ իրավիճակներով, որոնք ճնշում են և փոթորկում մեր ներաշխարհը: Քաջալերվե՛ք, Աստծո Խոսքին նայե՛ք, պայքարի մեջ հաղթահարելու միակ զենքը Աստծուն հնազանդվելն ու վստահելն է:

Երրորդը **անհնարինության** դեմ պայքարն է: Երբ գործը դժվարանա, ուժը սպառվի և արդյունք չտա, մեր հույսը կորցնում ենք և անհնարինության առջև ենք կանգնում: Այսպիսի պարագաներով լի է կյանքը: Նոր Կտակարանում կարդում ենք Պետրոս առաքյալի բանտից հրաշքով ազատվելու մասին: Անհնար էր այդքան պահապանների, շղթաների, փակված դռների միջով ազատորեն դուրս գալ: Մարդկայնորեն ինչ որ խորհեցք, թե անհնար է, Աստծո համար հրաշագործության առիթ է, որով Նա փառավորվում է: Աստված Իր գործությունը երևան է հանում մեր մտքով չանցած կերպերով. Նրա մոտ անհնարին ոչինչ չկա: Հիսուսն ասաց. «Եթե մանանեխի հատիկի չափ հավատք ունենաք, այս լեռանը կասեք. «Տեղափոխվի՛ր այստեղից», և այն կտեղափոխվի, և ոչինչ անհնարին չի լինի ձեզ համար»: Քո կյանքում ի՞նչն է լեռան պես կանգնել, ինչե՞րն են քեզ անհնար թրվում: Անկարողության դեմ պայքարելու ամենահզոր միջոցը աղոթելն ու հավատալն է: Աղոթք առ Աստված՝ խնդրելու միջոց՝ Նրա կամքի համաձայն, և հավատք, թե Տերը, իմանալով պարագան, ինչ-որ ձևով լուծելու է խնդիրը: Աստված հնարավոր դարձրեց ամենամեծ անհնարինը քեզ և ինձ համար, երբ Իր Միածին Որդուն աշ-

խարհ ուղարկեց: Անհնար էր սեփական գործերով Աստծո առջև արդարանալ, բայց Աստված այնքան սիրեց մեզ, որ հոժարեց Իր Որդուն ուղարկել, և այս անհնարինությունը հնարավոր դարձնել, որ պեսզի բոլոր հավատացողները Հիսուսի փրկությունը ու երկնային ժառանգությունը վայելեն:

Թող Տերը շնորհի, որ դիմենք մեր Փրկչին՝ սպասելով, երբ պայքարենք շտապողականության, վազվզուքի և անհամբերության դեմ: Հնազանդվենք՝ վստահելով Նրան, երբ պայքարենք անորոշության դեմ ու աղոթենք հավատքով, երբ պայքարենք անհնարինության դեմ՝ ի փառս Հիսուսի և Աստծո: Ամեն:

Վահիկ Հաղադյան

Իմ անունը Հիսուս է...

Այս հարափոփոխ և անկայուն աշխարհում կա մեկը, որ երբեք չի փոխվում. այդ անձը Ես եմ: Այս անհաստատ աշխարհում Ես կազմած եմ ալեկոծ ծովի վրա որպես անասան մի ժայռ: Շտապի՛ր Ինձ մոտ:

Թո՛ղ թշնամու ջրերը բարձրանան, թո՛ղ հակառակորդի ալիքները հարվածեն Ինձ, թո՛ղ ահագնանան փոթորիկներն՝ ստեղծելով շփոթ և իրարանցում: Եվ ի՞նչ կարող եմ դրանք անել: Միակ բանը, որ նրանց մոտ կստացվի, ճերմակ պղպջակներով այդ ժայռը ծածկելն է: Հետո՞: Մի՞թե երկար կտևի այդ ամենը:

Հենց որ ալիքները քաշվեն, պղպջակները պիտի պայթեն, պիտի ցնդեն՝ անէանալով օդի մեջ այնպես, ասես երբևէ չէին էլ եղել, ապա կրկին պիտի երևա Ժայռը՝ հզոր և անասան. Ես պիտի լինեմ շատերի՝ հույսի և փրկության ապաստանը:

Շտապի՛ր Ինձ մոտ, սիրելի՛ զավակ. այսօր միմիայն Ես կարող եմ լինել քո հանգստությունն ու պատսպարանը, և միայն Իմ ներկայության մեջ հոգիդ կարող է գտնել հասկացողությունն ու պաշտպանությունը, որ փնտրել ես այսքան ժամանակ:

Հովհաննես Ամարանյան

«Տերը պահպանում է պանդուխտներին, ընդունում է որբին ու որբևայրուն»

(Սաղ. 146:9)

«Ինչպե՞ս Աստված կարող է թույլ տալ այս ամենը: Ինչո՞ւ են այս-քան շատ երիտասարդներ զոհվում պատերազմների և աղետների ժամանակ»: Ամեն անգամ, երբ լսում ես սա, քեզ անհարմար ես զգում, քանի որ ուղիղ պատասխան չես գտնում: Սակայն ի վերջո Աստված անկախ է և հաշվետու չէ Իր ստեղծագործության առաջ: Եվ այդուհանդերձ, ով տալիս է նմանատիպ հարցեր, ցույց է տալիս, որ մեծ լրջությամբ է վերաբերվում տեղի ունեցող դեպքերին և պատասխան է փնտրում: Ուստի ես կփորձեմ պատասխանել՝ ելնելով սեփական փորձից:

Երբ ընդամենը չորս տարեկան էի, դժբախտ պատահարից հետո անսպասելիորեն մահացավ իմ հայրը: Լրացել էր ավագ քույրիկիս վեց տարին, իսկ կրտսերը ծնվել էր մեկ ամիս անց: Ծնողներս ընդամենը երեսուն տարեկան էին:

Ես աղոտ հիշողություններ ունեմ հորս մասին: Սակայն հաճախ եմ մտածել, թե ինչպես մայրս կարողացավ անցնել այսքանի միջով: Մենք՝ երեխաներս, տեսնում էինք, թե ինչպես էր նա կարդում իր հնացած Աստվածաշունչը և ծունկի իջնում՝ իր զգացմունքներն Աստծուն պատմելու: Հենց սրանում էր նրա ուժի գաղտնիքը: Մենք նրան տեսնում էինք տխուր տրամադրությամբ, սակայն երբեք չենք տեսել հուսահատված: Նա միշտ դիմում էր Աստծուն, որն օգնում էր անցնելու չարչարանքի և ցավի միջով: Միայն նրա՝ դժվարություններն այդ կերպով հաղթահարելու շնորհիվ մեր մանկությունը երջանիկ էր:

Մեր մայրը և մենք չենք գտել «ինչո՞ւ» հարցի պատասխանը: Մենք այդ ամենը թողեցինք Աստծո վրա: Անկախ դժբախտությունից՝ մենք սովորեցինք վստահել Նրա մեծահոգությանը:

Քայլել, ինչպես վայելուչ է մեր կոչումին

Աստծո Խոսքում «քայլել» նշանակում է ապրել: Քայլել Աստծո ճանապարհով նշանակում է ապրել Աստծո համար հաճելի կյանք:

Պողոս առաքյալը Եփես. 4:1-ում ասում է. «Ուստի աղաչում եմ ձեզ, ես՝ Տիրոջ համար բանտարկյալս, որ դուք այնպես քայլեք, ինչպես վայել է այն կոչմանը, որի մեջ կանչվեցիք»: Առաքյալը Եփեսոսի հավատացյալներին ու բոլոր դարերի քրիստոնյաներին կոչ է ուղղում և աղաչանք ներկայացնում, որպեսզի նրանք իրենց կոչումին վայելուչ կերպով քայլեն և ապրեն:

Ապրելակերպերը զանազան են: Մարդիկ ապրում են իրենց տնտեսական և ընկերային կյանքի մակարդակի համեմատ: Յուրաքանչյուրս ունի յուրահատուկ ապրելակերպ, որ կախված է զանազան տվյալներից: Սակայն երբ հարցը վերաբերում է հոգևոր կյանքին և ապրելակերպին, միայն մեկ ապրելակերպ կա, այն է՝ մեր կոչմանը վայելուչ ապրել:

Աստծո Խոսքը հորդորում է մեզ կանչող Սրբի պես սուրբ լինել: Ուրեմն մեր կոչումը սուրբ կյանք ապրելն է: Հովհաննես առաքյալն այդ ճշմարտությունը մեկնաբանում է և շատ պարզ ու հասկանալի բառերով արտահայտում. «Նա, ով ասում է, թե Նրա մեջ է բնակվում, ինքն էլ պետք է քայլի այնպես, ինչպես Նա էր (այսինքն՝ Հիսուսը) քայլում»: Ահավասիկ հստակ և ըմբռնելի սուրբգրային ճշմարտություն. եթե վկայում ենք, որ Հիսուսն ապրում է մեր մեջ, պարտավոր ենք ապրել Հիսուսի նման:

Վեր. Հապիպ Ալաճաճի

Քաղված «Հոգևոր խորհրդածությունների կաթիլներ» գրքից



Աղոթք

Տե՛ր ամենակալ, հզոր, սահավոր,
Ողորմած, գթած, ներող անասհման,
Ուզում եմ բացել սիրտն իմ սգավոր,
Սուրբ Նարեկացու Մատյանի նման:

Չեմ ուզում լինել ես մեծահարուստ,
Ոչ էլ ուզում եմ լինել մուրացկան:
Ինձ համար արդեն որոշված վերուստ,
Հացն հանապազօր Դու տո՛ւր մշտական:

Չեմ ուզում լինել ես ո՛չ թագավոր,
Ո՛չ էլ ուզում եմ լինել ճորտ, վասալ,
Հարգել եմ ուզում ռամիկ, մեծավոր,
Նաև հարգվել նրանց հավասար:

Չեմ ուզում լինել շողոքորթ, քծնող,
Նաև չեմ ուզում կոպտել ոչ մեկին,
Ուզում եմ լինել սերդ որոնող,
Միշտ Քեզ հետ խոսող առավոտ ծեփին:

Չեմ ուզում լինել ես գծուծ, ժլատ,
Նաև չեմ ուզում մսխել տվածդ,

Ուղարկի՛ր իմ տուն ամեն խեղճ, աղքատ,
Ինձ սեղանակից դարձիր, ո՛վ Աստված:

Չեմ ուզում լինել ալարկոտ, անբան,
Ոչ էլ ձիու պես միշտ քրտնած վագել,
Ուզում եմ լինել մեղու ժրաջան,
Մեղր բաշխելուց էլ մատս լիզել:

Չեմ ուզում լինել գոռոզ ու հայարտ,
Ոչ էլ անկարծիք, խեղճ, ստրկամիտ,
Ուզում եմ լինել միշտ երախտապարտ,
Ուզում եմ լինել գիտակը կամքիդ:

Չեմ ուզում լինել դատող, բամբասող,
Ոչ էլ ուզում եմ լսել բամբասանք,
Ուզում եմ լինել միշտ բարին ասող,
Եվ այլոց վերքին դնող բալասան:

Չեմ ուզում լինել լոկ խոսք քարոզող,
Չայն հանող պղինձ, հնչող ծնծղա,
Ուզում եմ լինել ես անհաղթ վագող,
Կյանքս՝ որպես լույս, որ վառ շողշողա:

Թող մեկ էլ ասեմ բարեգութ, օրհնյալ,
Չեմ ուզում շեղվել ես ո՛չ աջ, ո՛չ ձախ,

Ուզում եմ գնալ ճամփով միջանկյալ,
Որ կյանքիս վերջում չասեմ՝ ա՛խ, ավա՛ղ:

Քայց առանց Քո Սուրբ Հոգու, ի՛ն Աստված,
Անհնարին է այդպես ընթանալ,
Ուստի օգնի՛ր ինձ, անսահմա՛ն Գթած,
Ճանաչել ճամփադ, հոգով պնդանալ:

Որպեսզի երբ որ երկրից ելնեմ,
Քո սրբերի հետ բաժին ունենամ,
Ողորմությանբդ երբ հասնեմ Եդեմ,
Այնտեղ հաստատվեմ, հավիտյան մնամ:

Հրեշտակներիդ հետ երգչախումբ կազմած՝
Քո փառքը երգեմ անհատք ապավեն,
Քեզ տեսնեմ ճերմակ աթոռիդ բազմած,
Ու երկրպագեմ հավիտյանս, ամեն:

Գառնիկ Արրեյան